ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 5.

ԵՊՀ ԻՋԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԲՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ

ԳԻՏԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

08 Հունիսի 2021թ.

Նախագահ Մ.Ա.Զաքարյան

Քարտուղար Ք.Վ.Օթարյան

Ներկա էին խորհրդի 15 անդամներից 13 անդամները և ուգ նախագահ Արայիկ Շահնազարյանը: Նիստի օրակարգը ներկայացրեց Մ. Զաքարյանը:

ՕՐԱԿԱՐԳ

1. 2021թ. ավարտական աշխատանքների պաշտպանության ըդյունքների ամփոփում:
2. Մասնագիտական ամբիոնների գործունեության վերաբերյալ ամբիոնների վարիչնե րի տարեկան հաշվետվություն:
3. Ֆակուլտետի մասնագիտական ամբիոնների անհատական ծանրաբեռնվածության քննարկում:
4. Ուսանողների շրջանում անցկացված սոցհարցումների տվյալների քննարկում :
5. Ուս. խորհրդի և ՈՒԳԸ-ի նախագահների հաշվետվություն:
6. Ֆակուլտետի դեկանի ամփոփիչ հաշվետվություն:

Ֆակուլտետի խորհրդի նիստը բացեց և օրակարգը ներկայացրեց ֆակուլտետի դեկանի ժ/պ, խորհրդի նախագահ Մ.Ա.Զաքարյան:

Առցանաց քվեարկությամբ՝ 13 կողմ 0 դեմ, 0 ձեռնպահ համամասնությամբ որոշվեց

ՈՐՈՇՈՒՄ 5/1

- Հաստատել նիստի օրակարգը:

Օրակարգի առաջին՝ « 2021թ. ավարտական աշխատանքների պաշտպանության արդյունքների **ամփոփում**» հարցի վերաբերյալ ԵՊՀ ԻՄ-ի բնական գիտությունների ֆակուլտետի դեկանի ժ/պ Մ.Զաքարյանի զեկույցը ներկայացվում է ստորև.

Ամփոփիչ ատեստավորմանը մասնակցել են թվով 25 ուսանողներ, «Ինֆորմատիկա/համակարգչային գիտություն/» մասնագիտության 20 ուսանողներ և «Աշխարհագրություն» մասնագիտության 5 ուսանողներ:

«Աշխարհագրություն» մասնագիտության 5 ուսանողները ստացել են գերազանց գնահատականներ:

Հանձնաժողովի առաջարկությունները մասնագետների պատրաստման որակի հետագա բարելավման ուղղությամբ հետևյալն է.

Ավարտական աշխատանքների թեմաները լինեն ավելի արդիական և պրակտիկ կիրառություններով: Աշխատանքներում ներկայացնել հաշվարկային արդյունքներ:

«Ինֆորմատիկա/համակարգչային գիտություն/» մասնագիտության 20 ուսանողները գնահատվել են.

գերազանց 7 ուսանողներ,
լավ՝ 5 ուսանողներ,
բավարար 8 ուսանողներ:

Հանձնաժողովի առաջարկությունները մասնագետների պատրաստման որակի հետագա բարելավման ուղղությամբ հետևյալն է.

Հիմնական ուղղություններից մեկը, որը արժե բարելավել այն է, որ հարկավոր է պահել կրթության ուղղությունների և պրակտիկայի միջև կապը: Այսօրվա խնդիրները պահանջում են համընթաց շարժվել գործող խնդիրների և պահանջների հետ:

Թերություններից– թեմաների մի մասը ռեֆերատիվ բնույթի էին: Ծրագրային կամ հաշվարկային մաս չունեին: Գուցե արժե մտածել, որ մաթեմատիկները կապ հաստատեն ծրագրավորման ամբիոնի դասախոսների հետ:

Մ.Զաքարյանը նշեց նաև, որ ուսանողները առաջարկել են ընտրեն ոչ թե թեմաները, այլ ղեկավարներին:

Արտահայտվեցին – Ա.Հովակիմյանը ներկայացրեց, որ կա սահմանափակում, դասախոսը չի կարող ղեկավարել 5 ուսանողից ավել: Ա.Հովակիմյանը առաջարկեց, որ մաթեմատիկները խնդիրների լուծման համար կարող են օգտագործել Matematika փաթեթը: Գ.Սիմոնյանը ներկայացրեց, որ առկա բաժնում խնդիրներ չկային, իսկ հեռակա բաժնում խնդիրներ շատ էին, որը հիմնականում կապված էր ուսանողների թույլ մակարդակի հետ: Աշխատանքները չպետք է լինեն գրքից արտագրություն: Նա նաև առաջարկեց թեմաները լինեն ժամանակակից, յուրաքանչյուր ավարտական աշխատանք գիտական աշխատանք է, ուսանողների լավ աշխատանքները խմբագրվեն և ներկայացվեն տպագրության: Մ.Աթոյանը ներկայացրեց, որ հեռակայի ուսանողները լուրջ չեն մոտենում ավարտական աշխատանքներին: Նրա կարծիքով դա պայմանավորված է COVID վիրուսով, անցումային ժամանակաշրջան է, և հույս հայտնեց, որ կուղղվի: Առաջարկեց թեմաները պարզեցնել, որպեսզի ուսանողների ինքնուրույնությունը մեծանա: Գ.Սիմոնյանը առաջարկեց յուրաքանչյուր ամիս ավարտական աշխատանքների հաշվետվության ժամանակ ճշգրիտ ներկայացվի ուսանողի կատարած աշխատանքի չափը, բավարար չափով չաշխատած ուսանողների աշխատանքները չթույլատրել պաշտպանության:

ՈՐՈՇՈՒՄ՝ 5/2

- **Որոշեցին ընդունել ի գիտություն:**

Օրակարգի երկրորդ ՝ «մասնագիտական ամբիոնների գործունեության վերաբերյալ ամբիոնների վարիչների տարեկան հաշվետվություն» հարցի վերաբերյալ ԵՊՀ ԻՄ-ի բնական գիտությունների ֆակուլտետի Ծ/ԻՏ ամբիոնի վարիչ Ա.Հովակիմյանի և ԸՄ/Բ ամբիոնի վարիչ Գ.Սիմոնյանի զեկույցները ներկայացվում է ստորև.

Ա.Հովակիմյանը ներկայացրեց, որ աշխատանքները կատարվել են ըստ նախապես կազմված պլանի, կատարել ենք պորտֆոլիոների առկայության ստուգում, քննարկել ենք քննությունների անցկացման եղանակները, դասախոսներից նախապես պահանջվել են ներկայացնել ամբիոն հարցատոմսերը և հարցաշարերը ներկայացնել

նաև ուսանողներին կիսամյակի սկզբում: Ըստ դասախոսների ցանկության քննությունները կազմակերպվել են և OnLine և OffLine, այնուհետև քննարկվել են արդյունքները: Կարող եմ շեշտել, որ ուսանողները ոգևորված են աշխատաում ռոբոտաշինության լաբորատորիայում, որին նպաստեց օպերացիոն համակարգեր առարկայից հետազոտական աշխատանքների իրականացումը, հետագայում ավարտական աշխատանքների բնույթը կդարձնի հետաքրքիր և կիրառական:

Ավարտական շխատանքների թեմաների վերաբերյալ նշեմ, որ ղեկավարներից նախապես պահանջել էինք, թեմաների վերնագրերի հետ միաժամանակ ներկայացնել անոտացիան և ինչ պետք է լինի վերջնարդյունքը:

Գ.Սիմոնյանը ներկայացրեց, որ ելնելով աշխատանքային պլանից, որը հաստատվել էր օգոստոսին, հրավիրվել են ամբիոնի նիստեր, քննարկվել են ինչպես ուսումնական այնպես էլ կազմակերպչական հարցեր: Պահանջվել է թարմացնել պորտֆոլիոները: Ֆիքսվել է հետևյալ թերությունը՝ որոշ դասախոսներ ուսանողներին չեն տրամադրել դասախոսություններ: Հարց է բարձրացվել, որ սեպտեմբերին հարցաշարերի հետ միասին ուսանողներին տրամադրվեն նաև դասախոսությունները գրականության ցանկով:

Ք.Օթարյանը առաջարկեց կիրառել մուդլ համակարգը, որը բավականաչափ հնարավորություններ ունի և գրականությունների տեղադրելու, և ZOOM հարթակից օգտվելու, առաջադրանքների հանձնարարման մեթոդները զանազան են, ինչպես նաև ժամանակի առումով, հատկապես հեռակա ուսուցման համակարգի ուսանողները կարող են հանձնարարությունները կատարել և ներկայացնել իրենց հարմար ժամանակահատվածում:

ՈՐՈՇՈՒՄ՝ 5/3

- **Որոշեցին ամբիոնների կատարած աշխատանքները գնահատել բավարար:**

Օրակարգի երրորդ՝ «ֆակուլտետի մասնագիտական ամբիոնների անհատական ծանրաբեռնվածության քննարկում» հարցի վերաբերյալ ԵՊՀ ԻՄ-ի բնական գիտությունների ֆակուլտետի Ծ/ԻՏ ամբիոնի վարիչ Ա.Հովակիմյանի և ԸՄ/Բ ամբիոնի վարիչ Գ.Սիմոնյանի զեկույցները ներկայացվում է ստորև.

Ա.Հովակիմյանը ներկայացրեց, որ անհատական ծանրաբեռնվածությունները հիմնականում պահպանվել են, ամբիոնում ունենք նաև համալրում՝ ֆ.մ.գ.թ. Նարինե Նվերի Դավթյան և ֆ.մ.գ.թ. Գարեգին Վրեժի Սարգսյան, որի հետևանքով որոշ փոփոխություններ են կատարվել նախորդ տարվա ծանրաբեռնվածության համեմատ:

Դեռևս վերջնականապես հաստատված չեն , կքննարկենք նաև օգոստոսին:

Գ.Սիմոնյանը ներկայացրեց, որ ամբիոնը սպասարկում է հիմնականում ԻԿՄ մասնագիտությանը, հեռակա ուսուցման բաժնում աշխարհագրություն և քարտեզագրություն/ կադաստրային գործ, ինչպես նաև այլ ֆակուլտետների տարբեր մասնագիտությունների: Ժամերը բաշխվել են, սակայն մաթեմատիկական առարկաներից կան բաց առարկաներ, անհրաժեշտ է համալրել նոր դասախոսներով:

ՈՐՈՇՈՒՄ՝ 5/4

- **Որոշեցին քննարկենել նաև օգոստոսին:**

Օրակարգի չորրորդ՝ «Ուսանողների շրջանում անցկացված սոցհարցումների տվյալների քննարկում» հարցի վերաբերյալ ԵՊՀ ԻՄ-ի բնական գիտությունների ֆակուլտետի դեկանի ժ/պ Մ.Զաքարյանի զեկույցը ներկայացվում է ստորև.

Այս տարի բնական գիտությունների ֆակուլտետում ուսանողների շրջանում անցկացված սոցհարցումների արդյունքը լավ էր:

ԾԻՏ ամբիոնում 1 անձ 4-ից ցածր է գնահատվել, 8 հոգի 5 են գնահատվել, սակայն 6 անձի գնահատել է 1 ուսանող:

Դասախոսների միջին գնահատական –4.62

Դեկանատի միջին գնահատական –4.60

Հեռակառուցման բաժնում

դասախոսների միջին գնահատականը՝ -4.8 է,

բոլոր դասախոսները գնահատվել են 4.5-ից բարձր:

Անուններ չենք նշում, որովհետև ամբիոններում վարիչները անցկացրել են անհատական քննարկումներ:

Դասախոսները պետք է ազնիվ և խիստ լինեն ուսանողների նկատմամբ,որը կլինի ի շահ ուսանողների:

Կրթական ծրագրի առարկայական վերլուծությունը ներկայացված է ***հավելված 1-ում:***

ՈՐՈՇՈՒՄ 5/4

- ***Ընդունել ի գիտություն:***

Օրակարգի հինգերորդ՝ « Ուս. խորհրդի և ՈՒԳԸ-ի նախագահների հաշվետվություն »

Զեկույցով հանդես եկավ ՈՒԳ նախագահ Արայիկ Շահնազարյանը:

Առաջին կիսամյակի ընթացքում ֆակուլտետում հասցրել ենք անցկացնել մեկ սեմինար հարգելի պատճառներով: Երկրորդ կիսամյակում իրականացրել ենք տարբեր միջոցառումներ: Կազմակերպել ենք ծրագրավորման C++, C# լեզուների խմբակներ, որը 2 մասից էր, սկսնակների խումբը պարապում էր Գառնիկ Խաչատրյանը, որոշ չափով բազային գիտելիք ունեցողների դասընթացը անցկացրել եմ ես: Անցկացրել ենք 14 դասընթաց, մասնակցում էին 1-ին կուրսի ուսանողներ և 1 ուսանողուհի հեռակա ուսուցման բաժնից: Անցկացրել ենք «լավագույն ծրագրավորող» մրցույթ: 2-րդ կուրսի ուսանող Մովսես Մարդանյանը գրավեց առաջին տեղ, 2-րդ տեղում Անուշ Մատինյանն էր, 3-րդ տեղը գրավեց 1-ին կուրսի ուսանողուհի Տատյանա Ջելոյանը:

Տարվա ընթացքում կազմակերպել եմ 4 սեմինարներ,

1. «Սակրավոր» խաղի ծրագրային իրականացում թեմայով:
2. Ինչ է SMM –ը ներկայացրեցին 4-րդ կուրսի ուսանողները:

3. Հետազոտական աշխատանք թեմայով սեմինարը անցկացրեցինք համագործակցելով ԾԻՏ ամբիոնի դասախոս Լ.Ծատուրյանի հետ համագործակցությամբ, 4-րդ կուրսի ուսանողները ցածր կուրսեցիներին նախ ներկայացրեցին ինչ է հետազոտական բաղադրիչը, ինչպես պետք է այն իրականացնել, այնուհետև ուսանողները ցուցադրեցին WEB ծրագրավորում առարկայի շրջանակներում իրենց իրականացրած հետազոտական աշխատանքները:
4. Տրամաբանական խնդիրների լուծում թեմայով սեմինարը իրականացրեցին 1-ին կուրսի ուսանողները, նրանք համագործակցել էին ԾԻՏ ամբիոնի դասախոս Գևորգյան Ալվինայի հետ: 4 թեմա ներկայացրեցին առանձին խմբերով: Խնդիրները և տրամաբանական լուծումները առաջարկել էր Ա.Գևորգյանը: Ուսանողները գրել էին ծրագիր և ներկայացրեցին տրամաբանական և ծրագրային լուծումները: Ուանողները ձեռք բերեցին սեմինար անցկացնելու փորձ, հույս ունեմ հետագայում կլինի շարունակական:

ԵՊՀ ԻՄ ՈՒԳ-ն ԵՊՀ վարկանիշային աղյուսակում գրավում է 1-ին տեղը, 539 միավոր–գերազանց:

Արտահայտվեցին–Ա.Հովակիմյանը շնորհակալություն հայտնեց կատարած աշխատանքների համար, ներկա ուսանողներին առաջարկեց էստաֆետան վերցնել Արայիկից և նույն ակտիվ ձևով աշխատանքները շարունակեն հաջորդ ուսումնական տարում: Նոր ընտրություններին մոտենան շատ լուրջ և առաջարկեն այնպիսի թեկնածու, որը կաշխատի նույն էնտուզիազմով: Առաջարկեց ուսանողներին սեմինարների ցանկը ճշտեն ամբիոնում: Մ.Աթոյանը ներկայացրեց իր նկատառումը, այն է սեմինարավարներ հրավիրեն առաջատար ֆիրմաներից, քանի որ SS ոլորտը բավական բազմաճյուղ է, լավ կլինի առաջատար մասնագետներից ստանան մասնագիտական խորհուրդներ: Գ.Սիմոնյանը առաջարկեց տպագրեն հոդվածներ: ՈւՍ խորհրդի հաշվետվությունը չներկայացվեց: ՈւԽ նախագահ Ուլիխանյան Անահիտը գիտխորհրդի անդամ չէ և տեղափոխվում է հեռակա բաժին: Տեղակալ

Ա.Խաչատրյանը հրաժարվեց ներկայացնել կատարած աշխատանքները: Սեպտեմբերին կնտրվի նաև նոր ՈՒԽ նախագահ:

ՈՐՈՇՈՒՄ 5/5

- **Որոշեցին ՈՒԳ–ի կատարած աշխատանքները գնահատել բավարար:**

Օրակարգի վեցերորդ՝ « Ֆակուլտետի դեկանի ամփոփիչ հաշվետվություն» հարցի վերաբերյալ ԵՊՀ ԻՄ-ի բնական գիտությունների ֆակուլտետի դեկանի ժ/պ Մ.Զաքարյանի զեկույցը ներկայացվում է ստորև.

Այս տարի դասերը հիմնականում անցկացվեցին OnLine տարբերակով: Այնուամենայնիվ կարողացանք կազմակերպել նորմալ, քննությունները 2-րդ կիսամյակում անցկացվել են OffLine: Ուսումնական գործընթացը ընթացել է նորմալ: 2021-2022 ուս տարում մաթեմատիկ մասնագետների անհրաժեշտություն կա:

«Աշխարհագրություն» մասնագիտությունից ընդունելություն չի լինի, բայց 2022-2023 ուս տարվա ընդունելությունների ցանկանկում կներկայացնենք նոր «մեխատրոնիկա և ռոբոտաշինություն» մասնագիտությունը: Արդեն գրեթե պատրաստ են կրթական և առարկայակն ծրագրերը, որոնց վրա ակտիվորեն աշխատում են Մ.Ճաղարյանը և Ռ. Յոլչյանը:

ՈՐՈՇՈՒՄ 5/6

- **Որոշեցին դեկանատի կատարած աշխատանքները գնահատել բավարար:**

ՀԱՎԵԼՎԱԾ 1

Կրթական ծրագրի առարկայական վերլուծություն

Կրթական ծրագրի անվանում՝ «Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա»
Կուրս՝2-րդ 3-րդ կիսամյակ

- Էհմ ճարտարապետություն և ասեմբլեր լեզու

Առարկայի թեմատիկ բովանդակությունը բավականին հաջողված է, բայց քիչ ժամաքանակ է հատկացված բուն ասեմբլեր լեզվին։ Քիչ են գործնական ժամերը, և ժամաքանակի քիչ լինելու պատճառով չենք հասցնում առավել բարդ խնդրներ ուսումնասիրել և համապատասխան ծրագրեր գրել։

- Տվյալների կառուցվածքներ

Առարկայի դասախոսությունների հատվածը կարելի է համարել ամբողջությամբ բավարար և՛ ժամաքանակի, և՛ բովանդակային առումով։ Գործնական դասերի ժամաքանակը բավարար են, բայց դասընթացի շրջանակներում առաջարկվող խնդիրների բազան կարելի է ավելի բարդացնել, և դասընթացի շրջանակներում առավել բարդ խնդիրներ լուծել։ Դասընթացից ստացած գիտելիքները հետագայում կարող ենք օգտագործել ծրագրավորման տարբեր լեզուներում, այդ պատճառով ցանկալի է առարկայի շրջանակներում խնդիրների ուսումնասիրությունը առավել խորքային մակարդակի վրա։

- Մաթանլիզ-3

Առարկայի ծրագրային մասը կարելի է համարել լիարժեք։ Ե՛վ դասախոսությունների հատվածը, և՛ գործնականների հատվածը ամբողջությամբ փոխկապակցված են, և ժամաքանակի առումով բավարար։

- Հանրահաշիվ

Առարկանյի ծրագրային մասի հիմնական թերությունը կայանում էր նրանում, որ այն որոշ չափով իր մեջ պարունակում էր կրկնություն <<Անալիտիկ երկրաչափություն>> առարկայից, այսինքն կային թեմաներ որոնք անցել ենք 2-րդ անգամ։ Երևի թե առավել ճիշտ կլիներ համապատասխան թեմաների կրկնության համար հատկացնել 1-2 դասաժամ, քանի որ առարկայի շրջանակներում անհրաժեշտ են համապասխան գիտելիքները, այլ ոչ թե անցնել որպես նոր թեմաաներ։

- Ֆիզիկա

Առարկայի ծրագրային մասը ամբողջությամբ ներառում է մասնագիտության համար անհրաժեշտ թեմաները։Դասընթացի թերի կողմը երևի այն է, որ ընթացիկ ստուգումները անց են կացվում թեստային տարբերակով, առավել նախընտրելի կլիներ ներառված լինեին հենց բուն տեսական հարցեր և խնդիրներ։

- Մասնագիտական անգլերեն

Հաշվի առնելով առարկայի կարևորությունը այն կարելի էր ներառել նաև 4-րդ կիսամյակի առարկաների ցանկում։ Իսկ ընդհանուր առմամբ դասընթացի ծրագրային մասը և գնահատման մոտեցումը բավարար է։

4-րդ կիսամյակ

- GUI ծրագրավորում

Առարկան 2-րդ կուրսի հետաքրքրաշարժ առարկաներից մեկն էր, քանի որ առնչություն ուներ ծրագրավորման մեկ այլն ուղղության հետ, որը անծանոթ էր ուսանողին։ Առարկային ծրագրային թերությունը կարելի է այն համարել, որ ներառված թեմաները քիչ էին և ավելի հետաքրքիր կլիներ ուսունասիրել առավել բարդ օբյեկներ՝ առավել մեծ խորությամբ, և աշխատել առավել բարդ պրոյեկտների վրա։

- Օպերացիոն համակարգեր

Առարկայի շրջանակներում քիչ ժամանակահատված էր հատկացված լաբարատոր աշխատանքների համար, և միայն հետազոտական աշխատանքների ժամանակ ենք սկսել բուն գործնական ուսումնասիրությունները։ Լավ կլիներ ավելի շատ ժամանակ ունենայինք գործնական դասերի համար և ավելի շուտ ու ավելի խորությամբ էինք սկսել կատարել լաբարատոր աշխատանքներ։

- Կոմպլեքս անալիզ

Առարկայի ծրագրային մասը կարելի է համարել լիարժեք։ Ե՛վ դասախոսությունների հատվածը, և՛ գործնականների հատվածը ամբողջությամբ փոխկապակցված են, և ժամաքանակի առումով բավարար։

- Միկրոէլեկետրենիկա

Առարկայի ծրագրային մասը կարելի է համարել լիարժեք։ Դասախոսությունները և լաբարատոր աշխատանքները փոխկապակցված են միմյանց հետ և որոշ չափով անգամ լրացնում են իրար։

- Ալգորիթմների տեսություն

Առարկայի ծրագրային մասը կարելի է համարել լիարժեք։ Ե՛վ դասախոսությունների հատվածը, և՛ գործնականների հատվածը ամբողջությամբ փոխկապակցված են, և ժամաքանակի առումով բավարար։ Հետաքրքիր մոտեցում է պարունակում առարկայի ընթացիկ քննությունները, քանի որ միավոր է տրվում նաև անհատական տնային աշխատանքի համար, որը իր մեջ ներառում է մինչ այդ յուրացրած գիտելիքները և հանդիսանում է կրկնություն և ամփոփում ընթացիկ քննության համար։

- Գրաֆների տեսություն

Առարկայի դասավանդման շրջանակներում երևի թե լավ կլիներ ավելացնել գործնական դասեր, քանի որ դասընթացը միայն դասախոսություններից է կազմված, իսկ առանձին գործնական դասեր չունենք, և գործնական առաջադրանքները ներռվել են դասախոսությունների մեջ։

Բանական գիտությունների Մասնագիտություն՝ ԻԿՄ, Կուրս՝ III

Դասավանդման մեթոդի փոփոխություն։

1. Հնացած ծրագրավորման լեզուները չանցնենք, որն էլ անցնում ենք վերջում պրոյեկտ ներկայացնենք։

2. Համալսարանից հեռացնեն չսովորող ուսանողներին։
3. Դասախոսներն էլ քննություններ տան ամեն կիսամյակ։
4. Ավելացնեն ծրագրավորման առարկաների ժամաքանակը։
5. Համալսարան բերեն ծրագրավորող դասախոսներ։
6. Ավելի շատ ուշադրություն դարցնեն ուսանողների ինքնուրույն աշխատանքներին։
7. Մաթեմատիկական խնդիրների լուծումից բացի ,ինքնուրույն հանձնարարաել գրել այդ խնդրի կոդը ծրահրավորման լեզվով։
8. Առցանց դասեր անեն միայն խիստ անհրաժեշտության դեպքում։
9. Նոր ուսումնական տարում դասերը լինեն միայն լսարանային։
10. 2- րդ կուրսից հետո ուսանողները խմբերի բաժանվեն ,ով ցանկանում խորապես ուսումնասիրի մաթեմատիկան թող անցնի միայն մաթեմատիկական առարկաներ ,իսկ ով ցանկանում է ուսումնասիրի ծրագրավորում անցնի միայն ծրագրավորման առարկաներ։
11. Ուսանողներին ամեն կիսամյակից հետո տան ինքնուրույն առաջադրանքներ որոնց միջոցով ուսանողը կանփոփի այդ կիսամյակում ձեռքբերած գիտելիքները։
12. Ավելի շատ ուշադրություն դարձնեն պրակտիկ աշխաբանքմերին։Այսինքն ուսանողը իր ստացած գիտելիքները փորցարկի պրակտիկայում։